ՎԱՀՐԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
սահմանադրական իրավունքի, պետության և
իրավունքի տեսության ամբիոնի մագիստրոս

ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ «ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԻ» ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ

Հեղինակը իր առջև խնդիր է դրել պարզաբանել Գոշի հայտնի աշխատության դերը և նշանակությունը հայ սահմանադրական մտքի զարգացման մեջ: Փորձ է կատարվել հիմնավորելու «Դատաստանագրքի» նշանակությունը 12-13-րդ դարերում հասարակության տարբեր շերտերի համախմբման, օրինականության հաստատման, ազգային բարքերի և պետականության վերականգնման գործում: «Դատաստանագիրքը» մեզ բերում է այն կարևոր համոզմանը, որ օրենսդրությունը պետք է հիմնվի տվյալ հասարակության ազգային առանձնահատկությունների վրա, այլ ոչ թե արհեստականորեն կրկնօրինակվի:

Հիմնարար բառեր- *Սահմանադրություն, «Դատաստանագիրք», ազգային եկեղեցի, պետականության վերականգնում:*

Մխիթար Գոշի ծննդյան թիվը ստույգ հայտնի չէ, քանի որ հայտնի է, որ նա ապրել է երկար՝ ենթադրաբար 80-90 տարի, և ստույգ մահացել է 1213թ.: Գոշը ծնվել է Գանձակում, երկար տարիներ ապրել է իր հիմնադրած Նոր Գետիկ վանքում, որն իր անունով հետագայում կոչվել է Գոշավանք: Հետագայում Գոշը ձեռնադրվում է կուսակրոն քահանա և ստանում վարդապետի աստիճան: Գոշը բազմաթիվ աշխատությունների հեղինակ է, որոնց մեջ առավել ուշադրության է արժանի «Հայոց դատաստանագիրքը»:

Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» հայ միջնադարյան սահմանադրաիրավական մտքի գլուխգործոցն է. թեև այս դատաստանագիրքը չի հաստատվել ազգային պետական իշխանությունների կողմից, սակայն այն կյանքի ուղեգիր է ստացել և կիրառվել է հայ իրականության մեջ շուրջ 700 տարի:

«Դատաստանագիրքը» առանձնակի դեր և նշանակություն ունի հայ սահմանադրական մշակույթի մեջ: Սահմանադրական մշակույթը սահմանադիր նորմերով ու սկզբունքներով փոխհամաձայնությամբ ձեռքբերված հասարակական գոյի ընդհանուր կանոններով ստեղծագործաբար ապրելու մարդկային հանրության արժեքային որոշակի համակարգ է: Սահմանադրական մշակույթի հիմնական տարրերն են հասարակական համակեցության բանական իմաստավորումը, կենսագոյի հիմնարար արժեքների առկայությունը, դրանց շուրջ հասարակական համաձայնությունը, վերջինիս վերարտադրումն ապրելակերպի ու գործելակերպի, կանոնների ու համապարտադիր վարքագծի նորմերի միջոցով դրանց որոշակի համակարգված իրավական բնույթ հաղորդելն ու դրանց նկատմամբ հասարակական որոշակի վերաբերմունքը[1]:

Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» գրվել է 12-րդ դարում, ժամանակաշրջան, երբ Հայաստանը գտնվում էր ծայրաստիճան վատ տնտեսական և քաղաքական իրավիճակում: Այն կազմված է նախադրությունից և բուն դատաստանագրքից: Գրված է գրաբարով և կազմված է 251 հոդվածից:

Մեր վերլուծության նպատակն է ներկայացնել դատաստանագրքի դերը և նշանակությունը հայ սահմանադրական մշակույթի կյանքում: Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» ստեղծումը պայմանավորված էր ժամանակի մարտահրավերներով: Հայաստանում այդ ժամանակաշրջանում տիրում էր սոցիալ-տնտեսական ճգնաժամ, երկրի առջև ծառացել էին բազմաթիվ խնդիրներ, որոնք սպառնում էին ազգային ինքնությանը:

Գրքում ներկայացվում է, որ սուրն ու գրիչը գործում էին միասնաբար ու փոխադարձաբար պայմանավորում հաջողությունը[2]: Այս բառերի միասնությունը կազմում է մի ամբողջական արժեհամակարգ, որն ուղղված էր ազգային ազատագրությանն ու պետականության վերականգնմանը: Իրավունքի փիլիսոփայության և տեսության տեսակետից ուշագրավ է հենց այս հանգամանքը. հայոց առաջին աշխարհիկ օրենսգիրքը կազմվել է պետականության բացակայության պայմաններում, մի բան, որ բացառիկ երևույթ է իրավունքի պատմության մեջ:

www.journal.lawinstitute.am

Մխիթար Գոշի դատաստանագրքում ներկայացվում է, որ թշնամու դեմ չկար միասնական պայքար, տիրում էին անհանդուրժողականությունը, զինված ուժերի ցրվածությունը, իշխանների ներփակումը, և այս ամենին վերջ դնելու համար Մխիթար Գոշը հասկանում և որոշում է դրա լուծումը: Այդ ամենի լուծումը նա տեսավ «Դատաստանագրքի» ստեղծման մեջ, և ժամանակը ցույց տվեց, որ նա իրավացի էր: Մխիթար Գոշը դատաստանագիրքը գրելու անհրաժեշտությունը բացատրում է տասներկու պատճառներով.

Առաջին՝ մեզ՝ հայերիս, բազում անգամ պարսավել են թե՛ այլադավանները և թե՛ քրիստոնյաները, որ մենք դատաստան-դատաստանագիրք չունենք[3]:

Դեռևս մինչև քրիստոնեական ժամանակաշրջանը՝ Ք. ա. 28-27-րդ դ., հայկական լեռնաշխարհի Արատա երկիրը Հարավային Միջագետքի հնագույն ժողովրդին՝ շումերներին, հայտնի էր որպես «սուրբ օրենքների երկիր» անունով[4]: Մինչև «Համուրաբի» օրենքները Արատայում 1000 տարի առաջ գործում էին օրենքներ: Հայկական ցեղերի մեկ այլ պետական կազմավորման՝ Հայասա-Ազզի իրավական համակարգի մասին որոշ տեղեկություններ է պարունակում ք.ա. 14-րդ դարում խեթական պետության՝ Խաթթիի տիրակալ Սուպպիլուլիումասի (Ք.ա. 1380-1340թթ.) և Հայասայի թագավոր Ուկկանայի (Հականա) միջև կնքված պայմանագիրը[5]: Դա արդեն խոսում է իր ժամանակի համեմատ զարգացած իրավական մշակույթի մասին: Եվ այսպիսի ավանդույթներ ու սովորույթներ ունեցող հայ իրավական մշակույթը 12-13-րդ դարերում չուներ սեփական օրենքներ, որոնք կկարգավորեին հասարակական հարաբերությունները և իրավական համակարգը՝ չդիմելով օտար իրավական մշակույթին:

Երկրորդ՝ չարությունը մարդկանց մեջ, չարը ընդհանրապես զորացել էր, և նա հանգեցրել էր «զբնավորականն ի մեզ աուեանս» կամ «զգիտությունն որ ի բնութենէ ունէաք»[6]: Նույն այդ չարը, որ վերածվել է հոգու անկատարության, վերցրել է կատարելությունը և վշտակցության, սիրո փոխարեն դրել ատելությունը: Ներկայացվում է, որ մարդիկ փոխվել են, փոխվել են իրենց որակներով, բացակայում են իրավական և բարոյական նորմերով կարգավորվող իրավահարաբերությունները: Դատաստանագիրքը ստեղծվում էր, որպեսզի վերականգնվեին բնական օրենքի զգացողությունը, իրավունքով կարգավորվող հասարակական հարաբերությունները, սերն ու հանդուրժողականությունը միմյանց նկատմամբ՝ մարդկանց դնելով ճիշտ ուղու վրա:

Երրորդ՝ ծուլության պատճառով մարդիկ չեն վարժվում օրենսգիտության մեջ, անգիտակ են օրենքներին, հետևապես նրանց որոշումներն էլ ճիշտ չեն կամ շեղվում են օրենքից, ուստի «Կամեցաք գրով Դատաստանիս զնոսա իբրև ինքնոյ զարթուցանել»: Այս ամենը ներկայացվում էր 12-րդ դարում, և խոսքը գնում է այն մասին, որ Մխիթար Գոշը այս բոլոր անօրինականությունների լուծումը տեսնում էր Դատաստանագրքի ստեղծման մեջ, հիմնական օրենքի մեջ, որը կսահմաներ կանոններ և կեզրագծեր հասարակական հարաբերությունները: Այստեղ խոսքը գնում է իրավագիտակցության, բանականության մասին, որ մարդիկ բանական էակներ են, և չպիտի լինի նմանատիպ իրավիճակ, երբ մարդկային հարաբերությունները չկարգավորվեն իրավունքով և բարոյական նորմերով, քանի որ ինքը՝ մարդը, բնության մեջ տարբերվում է իր բանականությամբ: Եթե հասարակությունը օժտված չէ բանականությամբ, ապա բացակայում է հասարակական հարաբերությունների իրավունքով կարգավորվող զարգացումը: Այս բացերի լուծումը 12-րդ դարում նա տեսնում էր մարդկանց իրավունքների սահմանման մեջ, որ պետք է իրականացվեր հիմնական օրենքի միջոցով:

Չորրորդ՝ Մովսեսական օրենքը, մարգարեների խոսքը և ավետարանը, մեկ անգամ արդեն տրված լինելով, այդպես էլ մնացել են անշարժ, քարացած, մինչդեռ մարդկանց վարքն ու բարքը տարբեր են և փոփոխվում են ըստ ժամանակի, ըստ ժողովրդի և ըստ երկրի: Նշված օրենքները այդ հանգամանքը հաշվի չեն առել: Դատաստանագիրք է պետք և այնպիսին, որ նկատի ունենա այդ շատ կարևոր հանգամանքը: Նկատի ունենանք, որ խոսքը գնում է 12-րդ դարի մասին, որտեղ գործում էին մովսեական օրենքը, ավետարանը, և Մխիթար Գոշը համարձակություն է ունենում ստեղծել Դատաստանագիրք՝ տիրող վիճակը կարգավորելու համար: Նշենք՝ այդ ժամանակահատվածը ընդգրկում էր միջնադարը, որ պատմությանը հայտնի է իր բացասական կողմերով. հենց այն, որ նմանատիպ հայտարարություններով հանդես եկողներին անվանում էին հերետիկոսներ և նրանց ողջ ողջ այրում էին խարույկի վրա: Այս ամենը հաշվի չառնելով՝ Գոշը գնում էր հիմնական օրենք ստեղծելու ճանապարհով, քանի, որ կյանքը զարգացող իրողություն է, և գործող օրենքները պետք է լինեին ժամանակին համընթաց, պետք է ստեղծվեր հիմնական օրենք,

որը մարդկանց համար կունենար կողմնորոշիչ նշանակություն:

Հինգերորդ՝ առաջ սուրբ հոգին ասել է, թե քրիստոնեական կրոնը ներգործում էր և նպաստում ճշմարիտ դատաստան կատարելուն. կրոնը հենց օրենք էր՝ գրված մարդկանց սրտի մեջ, ուստի գրավոր օրենքի կարիք չկար: Այժմ սուրբ հոգին այլևս այն ազդեցությունը չունի մարդկանց վրա, «վրիպել ենք» քրիստոնեական եղբայրությունից և ուղղամտությունից: Գոշը խոսում է այն մասին, որ մարդկանց մեջ գոյություն չունեին,չէին պահպանվել այն արժեքները,որոնք բնորոշ են բանական էակին: Պետք է սահմանազատվեին և կանոնակարգվեին հասարակության և իշխանության, հասարակության և քաղաքացիական իշխանությունների միջև իրավահարաբերությունները: Այս ամենով հանդերձ պետք է ստեղծվեր դարերով եկող ավանդույթների հիման վրա ձևավորված հիմնական օրենքը՝ Դատաստանագիրքը:

Վեցերորդ՝ դատական գործերը վճռվում էին նաև երդմամբ, բայց աճել էր չարությունը մարդկանց մեջ, և նրանք, չնայած որ երդումն արգելել էր Աստված, տեղի ու անտեղի երդվում էին ու հաճախ՝ սուտ: Խախտված այս կարգը կանոնավորելու նպատակով է, որ գրվում է Դատաստանագիրքը: Այսպիսի արարքը մարդկային անբարոյականության բարձր դրսևորումներից մեկն է, որտեղ ամբողջությամբ արժեզրկվում էր բանական մարդու կերպարը, և Դատաստանագիրքը ստեղծում է նաև սահմաններ, պատիժներ նմանատիպ արարքների համար: Դատաստանագիրքը կոչված էր երաշխավորելու ազատությունը պահպանելու հնարավորությունը և ստեղծելու անճողոպրելի որոգայթ բոլոր վատթար մարդկանց համար, որպեսզի հարկադրված լինեին հանրության համար օգտակար գործունեության լծի տակ մտնել: Այն պետք է անկյունաքարային նշանակություն ունենար արդար օրենքներով կառավարելու, բնական իրավունքով ու արդարությամբ առաջնորդվելու համար:

Յոթերորդ՝ Դատաստանագիրքը գրվում է, որպեսզի հայերը այն չունենալու պատճառով չդիմեն մահմեդական դատարաններին: Երկրում կիրառվող օրենքները պետք է լինեին ազգային, պետք է բխեին երկրի ավանդույթներից, սովորույթներից, և ճիշտ չէ, որ օգտվում ենք օտար երկրի օրենքներից, որոնք չեն համապատասխանում երկրում տիրող վարքին ու բարքին: Սա է Դատաստանագրքի ստեղծման նպատակը: Օրենքները չպետք է ներմուծել, դրանք պետք է սկիզբ առնեն և զարգանան հայ ժողովրդի սահմանադրահիրավական մշակույթի ակունքներից:

Ութերորդ՝ ամենակարևոր պատճառներից մեկը «տեսանենք այժմ,- գրում է Մխիթար Գոշը, - զի բազումք եպիսկոպոսաց և ի վարդապետաց և քահանայից և ի գլխավոր աշխարհականց աչառանք և կաշառք բազում անգամ և տգիտությամբ թիրեն զուղիղ դատաստան»[7]: Գոշը Դատաստանագիրքը գրելու հիմնական պատճառներից է համարում եկեղեցու վարկի ու հասարակական կյանքում հեղինակության բարձրացումը, հոգևորականության պաշտպանությունը մահմեդականներից: Գոշը առաջնային նշանակություն է տալիս եկեղեցուն, աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերություններին. եկեղեցու դերը և նշանակությունը հայ իրավական կյանքի մեջ առավել ցայտուն էր դրսևորվում կորցրած պետականության պայմաններում: Եկեղեցին միակ հարստությունն է, որ ներքին կապով իրար է միացնում Հայաստանի բոլոր մասերը: Ում և ինչ իշխանության տակ էլ նրանք լինեին, միավորում էին ամբողջ հայ ժողովրդին մի կենտրոնի շուրջ: Գոշը համոզված կողմնակիցն է մեկ ընդհանուր ազգային եկեղեցու՝ քրիստոնեական միաբանությանը: Եկեղեցին՝ որպես այդպիսին, Գոշը համարում էր պետական մեքենայի անիվներից մեկը, ընդ որում, գլխավոր անիվներից մեկը, և, բնականաբար, նրա պտույտը չի կարող ունենալ պետական ամբողջ մեքենայի ընթացքից տարբեր ուղղություն: Հայ պատմագրությունը բազմաթիվ անդրադարձներ ունի ազգային-եկեղեցական ժողովների գումարման հանգամանքներին՝ հիմնական շեշտը դնելով փաստագրական նյութի ներկայացման, դրանց դերի ու նշանակության արժևորման պատմական ժամանակաշրջանի վերլուծության ու մի շարք այլ հանգամանքների վրա: Բանն այն է, որ հենց այդ ժողովներն են դարձել հայ սահմանադրական մշակույթի ձևավորման հիմքը: Այդպիսի առաջին պաշտոնական ազգային ժողովը, ըստ պատմագիրների վկայության, Աշտիշատի ժողովն էր՝ Ներսես Մեծի նախագահությամբ 365թ., հոգևորականների ու աշխարհականների մասնակցությամբ: Մյուսը՝ սահմանադիր բնույթ ունեցող կանոնական եկեղեցական Շահապիվանի ժողովը 444-447թթ.: Ժողովի հիմնական նպատակն էր վերականգնել սուրբ Գրիգորի, Ներսեսի, Սահակի և Մաշտոցի սահմանած կարգն ու կանոնը և սահման դնել բարօրությանը, քանի որ թուլացել էին եկեղեցու կարգն ու կանոնները, և մարդիկ վերադարձել էին անօրինություններին: Եվ մի շարք նմանատիպ

կանոնական եկեղեցական ժողովներ, որոնք կրել են սահմանադիր բնույթ և այդպիսով ձևավորել են հայ սահմանադրական մշակույթը՝ սահմանելով կանոններ և սահման դնելով հասարակության կենսագործունեությանը:

Մխիթար Գոշը մերժում էր ընդհանուր եկեղեցու գաղափարը և կանգնում ազգային եկեղեցիների սկզբունքի պաշտպանության դիրքերում: Ըստ նրա՝ ընդհանուր եկեղեցու գաղափարն ու քաղաքականությունը նույնքան թշնամական էին, որքան և Իսլամը: Առաջինը թերևս ավելի վտանգավոր էր, քանի որ քողարկված էր բարեկամական հրապուրիչ շղարշով:

Կա այսպիսի մի թևավոր ասացվածք. պատմության դասերը չուսումնասիրած հասարակությունը հավերժ դատապարտված է պատմության սխալները կրկնելուն: Հենց այս պատճառներով ստեղծվում է Դատաստանագիրքը: Այստեղ կարևորը ինքնաճանաչումն է. պետք է ուսումնասիրած լինենք մեր պատմությունը, թե ինչպիսի ճանապարհներով են անցել մեր պապերը: Գոշի Դատաստանագրքի հիմքը հանդիսանում էր ազգային մշակութային-իրավական համակարգը, և այս բարդագույն խնդիրների լուծումը տեսնում էր դատաստանագրքի մեջ, որը կերաշխավորեր իրավունքով կարգավորվող հասարակական հարաբերություններ՝ իրենում պարունակելով ազգային սովորույթների, ավանդույթների մի ամբողջական արժեհամակարգ:

Ահա այս դրդապատճառներն էին, որ օբյեկտիվորեն հանգեցրել էին ազգային իրավական նորմեր ունենալու անհրաժեշտությանը:

Դարի վերջում Դատաստանագիրք ունենալու կարիքը խիստ հասունացել էր, և դրա կարիքը զգում էին և՛ վերինները, և՛ վարինները: Եվ ադ ժամանակահատվածում Ներսես Լամբրոնացին արևմուտքում, իսկ Մխիթար Գոշը՝ արևելքում գործի անցան, որպեսզի այդ պահանջները բավարարվեն: Լամբրոնացու ստեղծած Դատաստանագիրքը, որ թարգմանվեց հունական օրենքներից, չունեցավ կյանք, քանի որ երկրում գործող օրենքները պետք է բխեին ազգային ավանդույթներից ու սովորույթներից, իսկ այդ ամենը բացակայում էր նրա Դատաստանագրքում:

Պատմության դասերը վկայում են, որ սահմանադրությունների ծնունդը որպես կանոն առաջ է գալիս երկրի առջև ծառացած բարդագույն խնդիրների լուծման համար[8]: Նման իրավիճակ էր Հայաստանում, երբ Գոշի Դատաստանագիրքը կարևոր խթան հանդիսացավ հայ սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման համար: Ի տարբերություն Լամբրոնացու Դատաստանագրքի՝ Գոշի Դատաստանագիրքը կազմված էր այնպիսի օրենքներից, որոնց հիմքում ընկած էին հայ ժողովրդի՝ դարերով պահպանված ազգային սովորույթները և ավանդույթները՝ ստեղծելով ազգային օրենսգիրք: Դատաստանագիրքը ստեղծվեց պետականության բացակայության պայմաններում, մի բան, որ բացառիկ երևույթ էր իրավունքի պատմության մեջ: Պետք էր վերականգնել ազգային հավատն ու պետականությունը, քանի որ այդ ժամանակաշրջանում երկրում տիրում էր արժեհամակարգի շփոթ, զինված ուժերի ցրվածություն, իշխանների ներփակում: Հասարակության բոլոր շերտերը պայքարում էին մեկ ընդհանուր թշնամու դեմ, բայց անկազմակերպ: Դատաստանագրքի ստեղծումը նպատակ ուներ պետական կենտրոնախույս մղումները համախմբել, ներքին ուժերը կենտրոնացնել, երկրի բոլոր հնարավորությունները մի զսպանակի մեջ առնել, որը միայն կկարողանար հարմար պահին հզոր պոռթկումով դեն շպրտել կաշկանդող արգելքները և ստեղծել «յանջուրս երևութացող» թագավորությունը[9]:

Գոշի կազմած Դատաստանագրքի գնահատման գործում նախ պետք է հիշել, որ, բացառությամբ Հուստինիանոս կայսեր ժամանակ կազմված հռոմեական օրենքների ժողովածուի և հետագա դարերում ընդունված բյուզանդական օրենսգրքերի («Էկոլոգիա», «Պրոխիրոն» և այլն), Առաջավոր Ասիայում և Արևմտյան Եվրոպայում չեն եղել նրան հավասար հուշարձաններ[10]: Անգնահատելի է Մխիթար Գոշի ավանդը հայ իրավաքաղաքական մշակույթի կյանքում: Դատաստանագիրքը ոչ միայն հոգևոր մեծագույն արժեք դարձավ իբրև մատենագրական գործ, այլև կյանքի կայուն ուղեգիր ստացավ որպես ամենօրյա կիրառության ուղեցույց և որպես իրավաքաղաքական ծրագիր:

Գոշը ներկայացնում է տվյալ ժամանակաշրջանում երկրում տիրող վիճակը. ամենուր չէին հարգվում շինականների իրավունքները, բարձրանում էին հարկերը, ուժեղացել էր շահագործումը: Գոշի ներկայացմամբ կարող էր ստեղծվել մի այնպիսի վիճակ, երբ կհամախմբվեին մարդիկ և ի վերջո վերջ կդնեին տիրող իրավիճակին, իսկ դա անդառնալի հետևանքներ կարող էր ունենալ, քանի որ տեղի կունենար մի պայթյուն, որ կարող էր ճակատագրական լինել, ուստի այս ամենը կանխվեց Դատաստանագրքի միջոցով: Գոշը իր Դատաստանագրքով սահմանում է վաշխառուների, պաշտոն-

յաների, շինականների իրավունքները և պարտականությունները: Գոշը Դատաստանագրքում ուրվագծում է կառավարման թե՛ կենտրոնական, թե՛ տեղական մարմինների իրավասության շրջանակները: Դատաստանագրքում բավական մանրամասն ներկայացվում է հոգևոր և աշխարհիկ ատյաններից յուրաքանչյուրի ընդհատակյա գործերի շրջանակը:

Գոշի Դատաստանագիրքը ունի սահմանադիր բնույթ: Դատաստանագիրքը սահմանափակում էր թագավորի և այլ իշխանական տների իրավունքները, քանզի ըստ օրենսգրքի գործել պարտավոր էին ամենքը. գործող օրենքները պետք է համապատասխանեին դատաստանագրքին: Այսպիսով Գոշը առաջ էր քաշում իրավունքի ուժով օրենքի գերակայության սկզբունքը: Սահմանդրությունները ներմուծվող կամ արտահանվող «ապրանք» լինել չեն կարող: Դրանք ապրող իրողություն չեն հանդիսանա. այդպիսին էր Լամբրոնացու օրենսգիրքը: Մխիթար Գոշի Դատաստանագիրքը իր արժեհամակարգով և իր արդիականությամբ հանդիսանում է հայ սահմանադրական մշակույթի հիմնաքարերից մեկը: 12-րդ դար, երբ տիրում էր ուժի իրավունքը. Մխիթար Գոշը ստեղծված վիճակի լուծում տեսնում էր իրավունքով կարգավորվող գործողությունների մեջ: Գոշի ժամանակաշրջանը դեռ խոր միջնադարն էր: Մարդու և անձի հակադրության վերացման բնագավառում պատմականորեն առաջին քայլը պետք է լիներ խտրականության վերացումը մարդու և անձի կյանքի հանրային իրավական պաշտպանության բնագավառում, և այդ մեծ քայլը թերևս իրավունքի ողջ պատմության մեջ առաջին անգամ արել է Մխիթար Գոշը: Գոշի Դատաստանագիրքը հանդիսանում է ազգային իմաստավորված գոյի դրսևորման արդյունք:

Նա առաջինն էր, որ օրենսդրորեն վերացրել է մարդու և անձի հակադրությունը և հավասարեցրել նրանց: Գոշը չէր կարող անել ավելին, քան թույլ էին տալիս ժամանակի և տիրող կարգերի պայմանները: Միջնադարյան հայ մեծանուն օրենսդիր և օրենսգետ Մխիթար Գոշը ոչ միայն բնական իրավունքի գաղափարների կողմնակիցն էր, այլև բնական իրավունքով հիմնավորում էր մարդկանց հավասարությունը օրենքի և դատարանի առջև[11]:

Գոշը, ավարտելով Դատաստանագիրքը, ճիգ ու ջանք է գործադրում, որպեսզի Ազգային ժողով գումարվի, և Դատաստանագիրքը օրենսդրական ճանապարհով ընդունվի, սակայն ապարդյուն: Ազգային ժողովը ինչ-ինչ պատճառներով չի կայանում: Այնուամենայնիվ Դատաստանագիրքը ունեցել է իր կիրառությունը: Այդ մասին է վկայում այն, որ Դատաստանագիրքը ունեցել է երկու օրինակ. կրկնօրինակը ուղարկվել է կաթողիկոսին: Գոշի Դատաստանագիրքը մեզ է հասել բազմաթիվ գրչագրերով. դարեր շարունակ «Գիրք Դատաստանի» - կիրառվել է ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ Կիլիկյան Հայաստանում, հայ գաղութավայրերում՝ Լեհաստանում, Ռուսաստանում (Ղրիմ, Աստրախան), Վրաստանում, Հնդկաստանում, Սուդանում: Պահպանվել են Դատաստանագրքի բազմաթիվ ձեռագրեր, որոնցից 40-ը, այդ թվում՝ հնագույնը (ձեռագիրը դ 488), պահվում են Մատենադարանում: Գոշը Դատաստանագիրքը ավարտին է հասցրել 1184թ.-ին: Առաջին անգամ Դատաստանագիրքը հրատարակվել է 1880թ.-ին: Դատաստանագիրքը թարգմանվել և հրատարակվել է լատիներեն, լեհերեն, հայատառ ղպչաղերեն, վրացերեն, ռուսերեն լեզուներով:

Ըստ Մխիթար Գոշի՝ ինքը գրել է Դատաստանագրքի միայն նախադրությունը և այն չի ավարտել. նշել է, որ այն չի կարող ունենալ վերջնակետ ո՛չ իր կողմից, ո՛չ հաջորդող սերունդների կողմից, որովհետև ըստ նրա՝ Դատաստանագիրքը ավարտվող գործ չէ. այն պետք է զարգանա և հարստանա ժամանակին համընթաց: Այսպիսով, մեր վերլուծությունից կարող ենք եզրակացնել, որ Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» հայ սահմանադրական մշակույթի անկյունաքարային հուշարձաններից մեկն է, հայ իրավական մտքի բարձրակետը և, ինչպես մյուս սահմանադրությունների ծնունդը, այնպես էլ Գոշի «Դատաստանագիրքը» ստեղծվեց և կատարեց այն կարևորագույն գործառույթը, որը բնորոշ է միայն սահմանադրություններին: Որպես վերջաբան կարող ենք ասել, որ Գոշի «Դատաստանագիրքը» բացառիկ նշանակություն է ունեցել ժամանակի հայ հասարակական մտքի զարգացման մեջ: Հոդվածում փորձ արվեց վերլուծել «Դատաստանագիրքը»՝ որպես հայ սահմանադրական մշակույթի կարևորագույն բաղադրատարր և որպես արժեհամակարգ:

[1] Տե՛ս Հարությունյան Գ. Գ. Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Երևան 2005, էջ 20:
[2] Տե՛ս Թորոսյան Խ. «Գիրք դատաստանի», Մխիթար Գոշ, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, Երևան 1975թ., էջ «Ժ»:
[3] Տե՛ս Թորոսյան Խ. «Գիրք դատաստանի», Մխիթար Գոշ, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, Երևան 1975թ., էջ «ԺԳ»:
[4] Տե՛ս Հարությունյան Գ. Գ. Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները, Երևան 2005, էջ 74:
[5] Տե՛ս История Древнего Востока; т. 2. М., 1988, С. 146.
[6] Տե՛ս Թորոսյան Խ. «Գիրք դատաստանի», Մխիթար Գոշ, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, Երևան 1975թ., էջ «ԺԴ»:
[7] Տե՛ս Թորոսյան Խ. «Գիրք դատաստանի», Մխիթար Գոշ, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, Երևան 1975թ., էջ «ԺԴ»:
[8] Տե՛ս “Конституционализм-уроки, вызовы, гарантии” Арутунян Г. Г., К., Логос 2011, С. 191.
[9] Տե՛ս Թորոսյան Խ. «Գիրք դատաստանի», Մխիթար Գոշ, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, Երևան 1975թ., էջ «ԺԷ»:
[10] Տե՛ս Սուքիասյան Ա.Գ. Մխիթար Գոշը և «Հայոց դատաստանագիրքը», Եր., 1965թ., էջ 61:
[11] Տե՛ս Սաֆարյան Գ. Մ. Գոշի իրավաքաղաքական հայացքները, պատմաբանասիրական հանդես, Եր., 1988թ., էջ 35-47:

Գրականություն

1. Թորոսյան Խ. «Գիրք դատաստանի», Մխիթար Գոշ, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, Երևան 1975թ., 643 էջ:
2. Սաֆարյան Գ. Մ. Գոշի իրավաքաղաքական հայացքները, պատմաբանասիրական հանդես, Եր.,1988թ.:
3. Սուքիասյան Ա.Գ. Մխիթար Գոշը և «Հայոց դատաստանագիրքը», Եր., 1965թ. 254 էջ:
4. Հարությունյան Գ. Գ. Սահմանադրական մշակույթ. պատմության դասեր և ժամանակի մարտահրավերները, Երևան 2005, 327 էջ:
5. “Конституционализм-уроки, вызовы, гарантии”, Арутюнян Г. Г., К., Логос, 2011, 308 с.
6. История Древнего Востока; т. 2. М., 1988, 342 с.

Ваграм Галстян
Магистр кафедры конституционного права,
теории государства и права юридического
факультета Ереванского гос. университета

РЕЗЮМЕ

Роль и назначение Судебника Мхитара Гоша в армянской конституционной культуре

Автор поставил перед собой задачу объяснить роль и значение известной работы Гоша в развитии армянской конституционной мысли. Была сделана попытка обосновать значение Судебника в объединении разных слоев общества, в утверждении законности, в восстановлении национальных обычаев и государственности с начала 12 по 13 века.

Судебник подводит нас к такому важному утверждению, что законодательство должно основываться на национальных особенностях данного общества и не копироваться искусственно.

Ключевые слова: законодательство, судебник, национальная церковь, восстановление государственности.

Vahram Galstyan
YSU Faculty of Law, Master`s Programme
Constitutional Law, Theory of Law and State

SUMMARY

The role and significance of Code of Law by Mkhitar Gosh in Armenian Constitutional culture

The aim of the author is to clarify the role and significance of the famous work by Gosh in the development of the Armenian constitutional thought. An attempt was made to substantiate the importance of Code of Law in the unification of different layers of society, justice and restoration of national traditions and statehood in the 12-13 centuries. The Code of Law enables us to believe that the legislation should be based on natural peculiarities of the society and shouldn’t be copied.

Keywords . Constitution, Code of Law, national church, restoration of statehood.